ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքները և գործարարների արդի պահանջները:Այս կրթական ծրագրի շրջանակներում դուք հնարավորություն կստանաք ձեռք բերել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ կառավարման և բիզնես ռազմավարության բնագավառում: Այն կզարգացնի ձեր մասնագիտական գիտելիքները, կառավարչական և առաջնորդման հմտությունները միջազգային չափանիշներին համապատասխան, որոնք անհրաժեշտ են մրցունակ լինելու համար:

Ծրագրի տևողությունը

1.5 տարի

Դասապրոցեսը

շաբաթական 3 անգամ
18.00 ից հետո

Ուսման վճարը (տարեկան)

700.000 ՀՀ դրամ

Որակավորում

կառավարման մագիստրոս



ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առաջին կիսամյակ

Մոդուլ 1
1.Բիզնես մենեջմենթ
2.Մակրոտնտեսագիտություն 3-րդ մակարդակ

Մոդուլ 2
1.Հետազոտության մեթոդներ
2.Էկոնոմետրիկա և տվյալների վերլուծություն

Մոդուլ 3
1.Նախագծերի կառավարում
2.Կիրառական մենեջմենթ

Մոդուլ 4
1.Բիզնես հաղորդակցություններ և բանակցությունների կառավարում
2.Բիզնես անգլերեն

Մոդուլ 5
1.Դասավանդման մեթոդներ
2.Հետազոտական սեմինար

երկրորդ կիսամյակ

Մոդուլ 6
1.Մարդկային կապիտալի և տաղանդների կառավարում
Ընտրովի առարկաներ
2.Փոփոխությունների և ժամանակի կառավարում
3.Առաջնորդում
4.Կոնֆլիկտների կառավարում

Մոդուլ 7
1.Ռազմավարական կառավարումը բիզնեսում
Ընտրովի առարկաներ
2.Սոցիալական ձեռներեցությունը
3.Լոգիստիկայի և մատակարարման շղթայի կառավարումը
4.Ճգնաժամային կառավարումը բիզնեսում

Մոդուլ 8
1.Ներդրումների կառավարում
2.Բանկային և ֆինանսական մենեջմենթ (դասավանդումը նաև անգլերեն)

Մոդուլ 9
1.Կորպորատիվ կառավարում
Ընտրովի առարկաներ
2.Էլեկտրոնային բիզնեսի կառավարում
3.Ստարտափերի կառավարում
4.Նորամուծությունների կառավարում

երրորդ կիսամյակ

Մոդուլ 10
1.Ռիսկերի կառավարումը բիզնեսում
Ընտրովի առարկաներ
2.Ֆինանսական և կառավարչական հաշվառում
3.Կորպորատիվ ֆինանսներ
4. Ֆինանսական հաստատությունների կառավարում

Մոդուլ 11
Գիտահետազոտական փորձառություն (տևողություն՝ 10 շաբաթ)

Մոդուլ 12
Մագիստրոսական թեզ



ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Գագիկ Սերգեյի Ասլանյան

Կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1977թ.- ից ՀՍՍՀ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտում, 1990 – 1999թթ աշխատել է Երևանի «Պլաստիկ» արտադրական միավորումում որպես տնօրենի տեղակալ, 1999 թ. – 2003 թ. ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ԱԺ նախագահի տեղակալ, 2004 թ. – 2006 թ. աշխատել է ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունում՝ նախարարի տեղակալ, 2006 – 2022 թթ.՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ, 2006թ. - ից մինչ օրս ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ (համատեղությամբ):

Նելլի Հայկազի Շահնազարյան

Կրթական ծրագրի ղեկավար

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի դոցենտ, ունի ավելի քան 30 տարվա դասավանդման փորձ: 2010-2018թթ.՝ Հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի վարիչ, 2002թ.-մինչ օրս՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, դոցենտ (համատեղությամբ), 2012-2018թթ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա, դոցենտ (համատեղությամբ): Աշխատանքին զուգահեռ մասնակցել է բազմաթիվ վերապատրաստման դասընթացների: Համահեղինակ է 2 ուսումնական ձեռնարկի, «Մենեջմենթ» (4 անգամ բարելավված և վերահրատարակված) դասագրքի, ավելի քան 25 գիտական հոդվածների հեղինակ է, հանդիսանում է 10 տնտեսագիտական թեկնածուի գիտական ղեկավար:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Խորեն Ալբերտի Մխիթարյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, 1990թ.-ից ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ: Համահեղինակ է «Մենեջմենթ» (4 անգամ բարելավված և վերահրատարակված) դասագրքի, ավելի քան երեք տասնյակ գիտական հոդվածի հեղինակ է: Մասնակցել է բազմաթիվ վերապատրաստման դասընթացների : Դասավանդում է SWISS UMEF համալսարանում որպես հրավիրյալ պրոֆեսոր:

Նարեկ Հակոբի Մելքոնյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

«Պեռնո Ռիկար Արմենիա» ՓԲԸ տնօրեն, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ: Աշխատանքային գործունությունը սկսել է գործարար խորհրդատվության ոլորտում: 2002-2013թթ. աշխատել է Երևանի կոնյակի գործարանում նախ՝որպես ավագ ֆինանսիստ, ապա՝արտահանման մենեջեր և արտահանման բաժնի ղեկավար: 2013-19թթ. եղել է «Պեռնո Ռիկար Արմենիա» ՓԲԸ վաճառքների և մարքեթինգի տնօրենը, 2019թ-ից՝տնօրեն: Մասնագիտական վերապատրաստման դասընթացներ է անցել Եվրոպայի և ԱՄՆ մի շարք առաջատար համալսարաններում: Ունի տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, ավելի քան 20 տարվա դասավանդման փորձ:

Շուշանիկ Յուրիկի Մկրտչյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1998թ-ին ՀՀ ֆինանսների նախարարությունում, աշխատել է Պետական պարտքի Կառավարման վարչության առաջատար մասնագետ, գլխավոր մասնագետ, բաժնի պետ: 2008թ-ից մինչ օրս աշխատում է «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ում որպես ֆինանսական տնօրեն, ընկերության Խորհրդի գործադիր անդամ է: Զուգահեռ՝ 2017-2019թթ-ին աշխատել է «Էներգանորոգում» ԲԲԸ գլխավոր տնօրեն, 2020թ-ից մինչ օրս համատեղում է «Էներջի Պլազա» ՍՊԸ-ի տնօրենի պաշտոնը: 2002թ-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ-ում, ունի 20 տարվա դասախոսական ստաժ: Կառավարման ամբիոնի ավագ դասախոս է, տ.գ.թ., 16 գիտական հոդվածների և 1 ուղեցույցի հեղինակ է: Աշխատանքին զուգահեռ մասնակցել է բազմաթիվ վերապատրաստման դասընթացների Հայաստանում, Ավստրիայում, Ճապոնիայում, Ֆրանսիայում և այլն: ՀԲ ծրագրերից մեկի փորձագետ է:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Սարգիս Արմենի Ասատրյանց

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի միջազգայնացման և բարեփոխումների գծով պրոռեկտոր: 2014-2016 թթ.աշխատել է «Հայաստան» համահայկական հիմնադրամում որպես գլխավոր մենեջեր: 2006-2014 թթ. “Johnson & Johnson”, “Sara Lee”, “Lorvenn Paris” ընկերությունների պաշտոնական և բացառիկ ներկայացուցիչ հանիսացող «Պարտնյոր» ՍՊԸ-ում որպես բիզնեսի զարգացման մենեջեր: 2009թ-ից դասավանդում է ՀՊՏՀ-ում, ինչպես նաև մի շարք միջազգային կրկնակի և համատեղ դիպլոմներ շնորհող կրթական նախագծերում, ինչպիսիք են SWISS UMEF University Շվեյցարիա, London School of Commerce Միացյալ Թագավորություն: 2011թ-ից մասնակցել է որակավորման բարձրացման տարբեր միջոցառումների՝ դասընթացների, սեմինարների, գիտաժողովների, աշախաժողովների, համաժողովների, կոնֆերանսների աշխարհի 40-ից ավել երկրներում:

Ռաֆայել Գևորգյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2021 թ. օգոստոսի 18-ից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, 2015-2021թթ.՝ «Դելոյթ»(Deloitte), Լյուքսեմբուրգ, աուդիտ և խորհրդատվություն, ավագ մենեջեր, խոշոր, ցուցարկված, արդյունաբերական կազմակերպությունների աուդիտի ամբողջական կառավարում, թվայնացման և բիզնես պրոցեսների օպտիմալացման, ներքին վերահսկողության ընթացակարգերի ներդրման խորհրդատվական ծրագրերի ղեկավարում: 2012-2015թթ.՝ «Քեյ Փի Էմ Ջի» (KPMG) ՍՊԸ, աուդիտ և խորհրդատվություն, աուդիտի կրտսեր խորհրդատու, հանքարդյունաբերության, ջրային և հեռահաղորդակցության ոլորտի կազմակերպությունների աուդիտի կրտսեր խորհրդատու:

ԳՈՐԾԸՆԿԵՐ-
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

CENTRAL BANK OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Coca-Cola

KPMG

Pernod Ricard Rouss

team TELECOM ARMENIA

VIVA MTS

SilkSoft

KILIKIA

Grant Thornton

pwc

TUFENKIAN HERITAGE HOTELS

vega

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտները կարող են իրենց աշխատանքային գործունեությունը ծավալել պետական տարբեր գերատեսչություններում և մասնավոր սեկտորում:

Ողջույն, ես Գագիկն եմ:

2019 թվականին գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի հակաճգնաժամային կառավարում մասնագիտության բակալավրիատը, այնուհետև ուսանել եմ ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի գործարար վարչարարություն մասնագիտության մագիստրատուրայում և 2021 թվականին գերազանցությամբ ավարտել այն: Ուսման 1.5տարիների ընթացքում ստացածս մասնագիտական գիտելիքները և գործնական հմտություններն ունեցել են ահռելի ազդեցություն իմ՝ որպեսի մասնագետի ձևավորման գործընթացում:

Այժմ ես ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աշխատակից եմ, ՀՊՏՀ Ֆինանսատնտեսագիտական քոլեջի դասախոս, ՀՊՏՀ Ամբերդ գիտահետազոտական կենտրոնի փորձագետ, և որ ամենակարևորն է՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ:

Ողջույն, ես Լիլիթն եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ կառավարում մասնագիտության բակալավրիատը, այնուհետև ուսանել եմ ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի գործարար վարչարարություն մասնագիտության մագիստրատուրայում և գերազանցությամբ ավարտել այն: Մագիստրատուրայի շնորհիվ ձեռք եմ բերել մրցունակ և ժամանակակից մասնագիտություն:

Այժմ աշխատում եմ Լյուքսեմբուրգում, Pricewaterhouse Coopers “PwC” –**ում՝ որպես աուդիտ մենեջեր**: Նախագծերի ղեկավարման ընթացքում կիրառում եմ ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները, որոնք իմ աշխատանքային գործունեության մեջ շատ մեծ դեր են խաղում:

շրջանավարտներ

Ողջույն, ես Հայկն եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ Կառավարման ֆակուլտետի «Գործարար վարչարարություն, MBA» մագիստրատուրան, ստանալով Կառավարման մագիստրոսի որակավորում:

Այժմ ղեկավարում եմ 2 **զբոսաշրջային գործակալություն՝ «Արաբկիր Ավիա»ՍՊԸ**, « **Սթարլայներ** »**ՍՊԸ** և արդեն իսկ այսօր կարող եմ փաստել, որ ձեռք բերված գիտելիքները իրենց ուրույն տեղն զբաղեցրին բիզնեսի կայացման գործում:

Ողջույն, ես Հասմիկն եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ-ի կառավարման մասնագիտության բակալավրիատը, այնուհետև՝ ՀՊՏՀ-ի գործարար կառավարում մագիստրատուրան:

Մագիստրատուրայի շնորհիվ ձեռք եմ բերել տեսական և գործնական գիտելիքներ, որոնք ներկայումս կիրառում եմ իմ աշխատավայրում և օգնում են իմ մասնագիտական ճանապարհին: **Աշխատում եմ** PwC **Արմենիայում՝որպես աուդիտի բաժնի մենեջեր**:

Ողջույն, ես Նարեկն եմ:

Սովորել և 2021 թվականին գերազանցությամբ ավարտել եմ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի գործարար վարչարարություն 1.5 տարի տևողությամբ մագիստրատուրան:

Այժմ Հայաստանի Հանրապետության Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գլխավոր քարտուղարն եմ, ինչպես նաև ՀՊՏՀ կառավարման ամբոնի հայցորդ:

Ողջույն, ես Ռուբենն եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի առկա բակալավրիատը, այնուհետև նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝գործարար վարչարարություն մասնագիտացմամբ: Ուսումս շարունակել եմ ՀՊՏՀ ասպիրանտուրայում: Փորձառու դասախոսների տված գիտելիքները և ՀՊՏՀ-ում ձեռք բերված կարողությունները ինձ օգնել են գործարարության անընդհատ փոփոխվող իրավիճակներում կողմնորոշվելու և կառավարչական ճիշտ որոշումներ կայացնելու գործում:

Ավարտելուց անմիջապես հետո անցել եմ աշխատանքի «Դերժավա-Ս» ՓԲԸ-ում՝ որպես բրենդ մենեջեր: Այնուհետև աշխատել եմ «Բեկոն Պրոդուկտ» ՍՊԸ-ում՝ որպես բրենդ մենեջեր, իսկ **այժմ աշխատում եմ «Վենդա» ՍՊԸ-ում (հայտնի է Չայկոֆֆ խանութների ցանցով) մարքեթինգի բաժնի ղեկավար:**

Ես Ղամբարյան Լուսինեն եմ:



Ավարտել եմ ՀՊՏՀ-ն կառավարում մասնագիտությամբ, **այժմ աշխատում եմ «Յուքոմ»ընկերությունում ՝ որպես մասնաճյուղի ղեկավար**:Աշխատանքի ընթացքում օգնության են գալիս այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք ձեռք եմ բերել ուսումնական տարիներին:

Անասելի բարձր կարող եմ գնահատել դասախոսական անձնակազմի ներդումը յուրաքանչյուր ուսանողի վերապատրաստման հարցում:
Հ.Գ. Միշտ մեծ հպարտությամբ եմ փաստում,որ եղել եմ տնտեսագիտական համալսարանի ուսանողուհի: